

ՆՈՐԱՐԱՐ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ 2019 ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Ծաղկաձորում սեպտեմբերի 23-25-ն անցկացվեց «Նորարար գրադարաններ-2019» եռօրյա աշխատաժողովը, որին մասնակցեցին հանրապետության գրադարանների ավելի քան երեք տասնյակ աշխատակիցներ, նրանց թվում՝ Հայաստանի ազգային գրադարանի 4 աշխատակից:



«Այսօր գրադարանները պետք է վերափոխվեն, այլապես դրանք սուզվում են: Մույն աշխատաժողովը գրադարան կոչվող մեր նավի արդեն իսկ բացված առագաստներին կամեկն ավելացնելու փորձ է» - աշխատաժողովը բացելով ասաց ԱՄՆ դեսպանության Ամերիկյան կենտրոնի տնօրեն Ներսես Հայրապետյանը, շեշտելով, որ ժամանակակից գրադարանի ստեղծման հիմքը ստեղծարար գրադարանավարն է, որը նաև նորարար է և քայլեր է ձեռնարկում իր գաղափարներն իրականացնելու համար՝ օգտագործելով սեփական ստեղծարարությունը:

ԱՄՆ դեսպանության հանրային կապերի գրասենյակի ղեկավար Լիա Միլլերը



ողջունեց աշխատաժողովի մասնակիցներին, այնուհետև ծանոթացավ Հայաստանի գրադարանների զարգացման ուղիներին, ծրագրերին ինչպես նաև հուզող հարցերին:

Աշխատաժողովում զեկույցներով հանդես եկան գրադարանային գործի, ժամանակակից թվային տեխնոլոգիաների, թվային մարքեթինգի և հարակից մյուս ոլորտների լավագույն մասնագետները՝ տալով գրադարանավարի աշխատանքի արդիականացմանը, գրադարանը գրավիչ վայր դարձնելուն միտված գործնական, կիրառական խորհուրդներ:

Անդրադարձ եղավ «Համահավաք թվային գրադարան» շտեմարանին, «Digital Humanities» թեմային, վեբ տեխնոլոգիաներին, Google-ի ամպային տեխնոլոգիաների գործիքները գրադարանային աշխատանքներում ներդնելուն, օնլայն հանրության հետ արդյունավետ աշխատանքին, սոցիալական ցանցերի գրագետ կառավարմանը, տեղեկատվական անվտանգության ապահովմանը և այլն:



Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանը խոսեց հասարակական կազմակերպությունների հետ գրադարանների



համագործակցության թեմայով՝ նշելով դրա հեռանկարայնությունը:


Աշխատաժողովի շրջանակում «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության մուլտիմեդիա խմբագիր Արթուր Պապյանն անցկացրեց լուսանկարչության ինտերակտիվ դաս, գրականագետ, հանրային կապերի մասնագետ Անուշ Սեդրակյանը խոսեց ընթերցողին գրքին,



գրադարանին մոտեցնելու մեթոդների մասին:

Աշխատաժողովը եզրափակեց Վիքիպեդիայի խմբագիր Արմեն Միրզոյանը՝ իր խոսքն սկսելով Վիքիմեդիայի՝ «Վիքին սիրում է գրադարաններ» կարգախոսով: Բանախոսը մասնակիցներին ծանոթացրեց Վիքիդարան առցանց թվային գրադարանում և Վիքիքաղվածք նախագծում գրադարանավարների օգնությամբ նյութեր տեղադրելու, դրանք խմբագրելու նրբություններին: Նա նշեց, որ Վիքիդարանում թվայնացված գրքեր տեղադրելիս համագործակցում են Հայաստանի ազգային գրադարանի հետ՝ անհրաժեշտ գիրքը վերցնելով, թվայնացնելով և թվայնացված տեքստի հետ վերադարձնելով, որը նաև տեղադրվում է Ազգային գրադարանի Հայ գիրք շտեմարանում:

Աշխատաժողովում ընդգծվեց, որ Հայաստանի ազգային գրադարանը կարևոր դեր ունի հանրապետության բոլոր գրադարանները միավորելու գործում, և որ նույնչափ



կարևոր է, որպեսզի ստեղծվի Ազգային գրադարանի աջակիցների կազմակերպություն կամ հիմնադրամ, որի անդամ հեղինակավոր մարդիկ, գործարարները և այլք նյութական աջակցություն ցույց կտան Մայր գրադարանին:

Բոլոր զեկուցողների մտայնությունն այն էր, որ գրադարաններում նորարարությունը միայն տեխնոլոգիական հազեցվածությամբ չպետք է սահմանափակվի կամ որոշվի: Նորարար պետք է լինել նախ և առաջ մտածողությամբ, ավանդական մեթոդները նորովի կիրառելու, մատուցելու հմտությամբ և շատ այլ հմտություններով, որոնց միասնությունն էլ ձևավորում է ժամանակակից գրադարանավարի կերպարը՝ որպես գրադարան-ընթերցող կապի ամենակարևոր օղակ: